

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԿԻՎԻ ԱՐԿԻՎԱԿԱՆ ԱՐԿԻՎ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԿԻՎԻ ԱՐԿԻՎԱԿԱՆ ԱՐԿԻՎ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԿԻՎԻ ԱՐԿԻՎԱԿԱՆ ԱՐԿԻՎ

Երիտասարդ ֆինանսիստների և գործարարների ասոցիացիայի նախագահ Նոդար Ճիճինաձեի խոսքերով՝ երկրի ապահովագրային և դեղագործական շուկաները չի կարելի քննարկել համատեղ և միակ բանը, որ կարող է նվազեցնել դեղորայքի գները, մրցակցային միջավայրի ստեղծումն է: Սակայն, նրա կարծիքով, այդ ուղղությամբ երկրում դեռևս ոչինչ չի փոխվել և մինչև այժմ դեղագործական շուկայում աշխատում են այն ընկերությունները, որ աշխատել են նախկինում:

«Եթե վերջին ժամանակներս դեղորայքի գները չնչին չափով նվազել են, ապա դա ավելի շուտ բիզնեսի բարի կամքի դրսևորում է, ուրիշ ոչինչ», - հայտարարել է Ճիճինաձեն: Նրա խոսքերով՝ երկու տարի առաջ Ասոցիացիան իրականացրել է ուսումնասիրություն, և այն ցույց տվեց, որ դեղագործական ընկերությունները դեղամիջոցները վաճառում են 100 տոկոս շահով:

Վերջին ուսումնասիրությունը տվյալ շուկայում անցկացվեց 2012 թվականի հունիսին, «Միջազգային թափանցիկություն-Վրաստան» ոչ կառավարական կազմակերպության կողմից: Պարզվեց, որ գների նվազեցումը վերաբերել է առավել կարելոր դեղորայքի 27 տոկոսին և էժան «գեներիկ» դեղամիջոցների 21 տոկոսին: Նույն ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վրացական դեղագործական ընկերություններում հավելարժեքը կազմում է 102 տոկոս, այն ժամանակ, երբ, օրինակ, Իտալիայում դա 49 տոկոս է, Հունգարիայում՝ 27: Դա վկայում է, որ վրացական ընկերություններն աշխատում են շատ բարձր շահույթի ուղղությամբ: Դեղամիջոցների գների նվազեցման մասին խոսում են նաև իշխանության ներկայացուցիչները, այդ թվում՝ առողջապահության և էկոնոմիկայի նախարարները: Դեղագործական ճյուղի փորձագետ Թինա Թուրձելաձեի կարծիքով, վերջին ժամանակներս դեղորայքի գների կապակցությամբ զգալի փոփոխություններ չեն կատարվել և ընկերությունների շահույթի նորման նույնպես մնացել է անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԿԻՎԻ ԱՐԿԻՎԱԿԱՆ ԱՐԿԻՎ